

## ՈՐՈՇՈՒՄ

### Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

01.12.2021թ.

ք. Իջևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնի Տավուշի Տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող, արդարադատության լեյտենանտ Հ. Անտոնյանս ուսումնասիրելով թիվ 04926685 կատարողական վարույթի նյութերը

#### ՊԱՐԶԵՑԻ

Շենգավիթ վարչ. շրջ. ընդհանուր իրավասության դատարանի կողմից 23.01.2019թ. տրված թիվ ԵՇԴ/3369/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է Խաչատուր Ռազմիկի Մելքոնյան-ից հոգուտ Ելենա Արթուրի Գրիգորյանի բռնագանձել 2500000 ՀՀ դրամ:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների ընթացքում արգելադրվել է պարտապան Խաչատուր Ռազմիկի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոցի թիվ 28 բնակելի տունը և հողամասը, որը <<Ամինտաս Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից գնահատվել է 15.300.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկության մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3, 35.4 հոդվածներով՝

#### ՈՐՈՇԵՑԻ

Պարտապան Խաչատուր Ռազմիկի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գույքը

h/h	լուծի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	գույքի քանակը
1	<p>Տավուշի մարզ. ք. Դիլիջան. Սայաթ-Նովայի փող. 28 հասցեի բնակելի տուն և հողամաս:</p> <p><u>Շենքի ընդհանուր բնութագիրը:</u></p> <p>Շենքի հիմքը՝ երկաթ-բետոն 2 հարկանի,</p> <p>Շենքի պատերը՝ քարից, արտաքինից պատված g/w շաղախով</p> <p>Տանիքը՝ մետաղյա վահանակ</p> <p>Միջհարկային ծածկը՝ երկաթ-բետոն</p> <p>Առաստաղի բարձրությունը 1-ին հարկ՝ 2.7մ, 2-րդ հարկ՝ 2.9 մ, մուտքի և ներսի դռները՝ փայտե, պատուհանները փայտե, հատակը մանրատախտակ, տախտակ, բետոն, պատերը՝ ներկանյութ գաջասավաղ, սանհանգույցի հատակը և պատերը՝ կերամիկական սալիկապատ, կոմունալ հարմարությունները գազ, ջուր, էլ. հոսանք, կյոտլի</p> <p><u>Բնակելի տան նկարագիրը /վկայականի համարը՝ 05062018-11-0014/:</u></p> <p>Նպատակային նշանակությունը՝ բնակելի,</p> <p>Օգտագործման նպատակը՝ բնակելի տուն,</p> <p>Իրավունքի տեսակը՝ սեփականություն,</p> <p>Ընդհանուր մակերեսը /քմ/ 137,2 քմ բնակելի տուն, որից 1-ին հարկ՝ 63.2(40.3 + 16.5 + 6.4)քմ, 2-րդ հարկ՝ 60.8 քմ, ք/պատշգամբ՝ 13.2 քմ</p>	15 300 000 ՀՀ դրամ	11 475 000 ՀՀ դրամ	1 հատ

<p><u>Հողատարածքի նկարագիրը /կադաստրային համարը՝ 11-003-0227-0023:</u>          Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,          Օգտագործման նպատակը՝ բնակելի կառուցապատման,          Իրավունքի տեսակը՝ սեփականություն,          Ընդհանուր մակերեսը /քմ/՝ 685.0 քմ,  <u>Լրացուցիչ տվյալներ:</u>          Հողամասը թեք հարթությամբ է՝ տարբեր մակարդակներով          Բնակելի տունը հանդիսանում է մեկ ընդհանուր շինություն մի մասը՝          ընդհանուր պատերով          Բնակելի տան ներքին հարդարանքը /1-7/ սանդղակով          համապատասխանում է 4 կատեգորիային, միջին վիճակ:          Տրանսպորտային մատչելիությունը՝ միջին</p>			
---	--	--	--

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ [harkadir.ajurd.am](http://harkadir.ajurd.am) միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 19.01. 2022թ:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրնքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

**Ծ Ա Ն Ո Ռ Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն՝**

Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում գետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առավաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

**ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԼԵՅՏԵՆԱՆՏ**

**Հ.ԱՆՏՈՆՅԱՆ**